Ltn
856

1999

43713-Կ.Հ

ՓՐԱԳԻՐ

# ԹԱՂԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ

—

ՊԱՏՐԱՍՏԵԱԼ Ի ՁԵՌՆ

## ԱՏԵՆԱՊԵՏԱՑ ԴԻՒԱՆԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ

—

### ԳԼՈՒԽ Ա.

ԹԱՂԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդուած 1. Թաղ մի է այն շրջանակն՝ ուր կան գէթ յիսուն ընտրողք և եկեղեցի ու վարժարան։

Յօդ. 2. Իւրաքանչիւր թաղ պարտի Թաղային ժողով մ'ունենալ, որ՝ համարատու իւր կեդրոնին Վարչութեան՝ թաղին գործոց վերին անօրէնութիւնը կը վարէ, և ընթացիկ գործոց համար՝ առ ինքն համարատու՝ Թաղական Խորհուրդ մը կը կարգէ։

Յօդ. 3. Առաջին յօդուածին պայմաններէն զուրկ եղող թաղը՝ մերձակայ թաղի մը հետ կը միանայ. և եթէ այս անկարելի ըլլայ, իւր կեդրոնին մասնաւոր անօրէնութեան կենթարկի։

Յօդ. 4. Մերձակայ թաղերն՝ ընտրողաց հաճութեամբ՝ կրնան միանալ և մէկ թաղ. ժողով ընտրել։

Յօդ. 5. Միացեալ թաղերու թաղ. ժողովն կրնայ մէն մի թաղին յատուկ թաղ. խորհուրդներ կարգել, եթէ հարկ տեսնէ։

1342
ՀՍ 858
1856-601
Q-28323-62
ՀԱՅԿ. ԳՐՔԱՏՈՒՆ ԳՈՍ. ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅ.ՍՍՀ
ՀԱՅԿ. ԳՐՔԱՏՈՒՆ ԳՈՍ. ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅ.ՍՍՀ Ա. ՍՅԱՍ. ԻԿՅԱՆ ԱՍԿԱՆ

## Ա.

### ԹԱՂԱՅԻՆ ԺՈՂՈՎ.

Յօդ. 6. Թաղային Ժողովն քսան և հինգ անդամներէ կը բաղկանայ։

Յօդ. 7. Թաղային Ժողովին պարտաւորութիւնքն են.

Ա. Թաղական Խորհուրդն ընտրել.

Բ. Թաղին եկմտացոյցը սահմանել.

Գ. Հարցապնդել ի հարկին զԹաղական Խորհուրդն, և տարեկան հաշիւ ու համար առնուլ ի նմանէ.

Դ. Թաղեցի մանկտւոյն նախնական պարտաւորիչ կրթութիւն ստանալուն, և դպրոցական շրջանն աւարտող կարօտ պատանեաց արհեստ ուսանելուն միջոցները դիւրել.

Ե. Իւր իրաւասութեան ենթարկեալ թաղային պաշտօնէից վիճակը բարւոքելու և ապագայն անդորրելու ջանալ.

Զ. Ամուսնութիւնը քաջալերել.

Է. Թաղին աղքատամարին և տարեկան վիճակագրին պատրաստութեանն հսկել.

Ը. Թաղեցւոյն ընտանեկան և ընկերական վիճակը բարձրացնելու, և ցնաստակար սովորութիւններն անհետացնելու փոյթ տանիլ.

Թ. Ի մի բան՝ թաղին ընդհանուր զարգացման և յառաջդիմութեան միջոցներն հոգալ։

Յօդ. 8. Թաղ. Ժողովն ամիսը մի անդամ սովորական նիստ կընէ, դռնբաց կամ դռնփակ։

Սակից զատ՝ յարտասովոր նիստ կը գումարի,



Ա. Երբ Ժողովն օրակարգին մէջ խնդիր ունենայ.

Բ. Երբ Թաղ. Ժողովոց դիւանը կամ Թաղ. Խորհուրդը պէտք տեսնեն և հրաւիրեն.

Գ. Երբ Ժողովականայ մեծամասնութիւնը գրով խնդրէ։

Յօդ. 9. Թաղ. Ժողովը՝ անտուկին եկմտացոյցը սահմանելու առեն՝ պարտի ինկատ առնուլ կրթական օրինաց որոշմադրութիւնքն, և ըստ այնմ իւր թաղին վարժարանաց յատկացնել՝ կրթութեան պատկանեալ հասոյթներն. որոց հիմ պէտք է բռնուի՝ թաղային անտուկի բովանդակ հասութիւց առնուազն 40 %ը։

Յօդ. 10. Թաղ. Ժողովը գնմանց, վաճառմանց, փոխառութեանց, փոխատուութեանց, և՝ արտաքոյ սահմանեալ եկմտացոյցի հարկ եղած՝ շինութեանց և նորոգութեանց անօրէնութիւններն՝ ըստ 25րդ յօդուածոյ վարչական կազմակերպութեան օրինաց՝ Վարչութեան հաւանութիւնն ստանալէ յետոյ կը գործադրէ։

Յօդ. 11. Իւրաքանչիւր Թաղ. Ժողով պարտի, ամեն սահմանադրական տարեգլխին՝ որ ի Մայիս մատուցանել առ Կեդրոնական Վարչութիւնն մի համարատուութեան տեղեկագիր, որ պէտք է պարունակէ Թաղ. Ժողովոյ պաշտօնին ու պարտաւորութեան մէն մի մասին վերաբերեալ տեղեկութիւններն։

Կեդրոնական Վարչութիւնն Աղգ. Ժողովոյ կը ներկայէ անոնց հաւաքածն, ամփոփմամբ, և ի հարկին նոյնութեամբ։

Յօդ. 12. Թաղ. Ժողովք՝ կեդր. Վարչութենէն հաստատեալ ընդհանուր կանոնագրի մը համաձայն՝ կը վարեն իրենց պաշտօնն։

Բ.

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 13. Թաղական Խորհուրդը կը բաղկանայ հինգ անդամներէ, որոց իւրաքանչիւրն՝ ըստ իւր յանձնառութեան՝ հետևեալ ճիւղերէն միայն կը յատկանայ, և նորա անօրինումն ու հսկողութիւնը կատանէ։

1. Ատենապետութիւն,
2. Ատենադպրութիւն,
3. Եկեղեցպանութիւն,
4. Հոգաբարձութիւն,
5. Գանձապետութիւն։

Փոքր Թաղերու մէջ՝ այս պաշտօնէութեանց երկուքը մէկ անձի կրնան յանձնուիլ, որով Թաղ. Խորհուրդն երեք անդամէ կը կազմուի։ Բայց Ատենապետութիւնն՝ ուրիշ պաշտօնի, և Եկեղեցպանութիւն ու Գանձապետութիւնն իրարու հետ չեն կրնար միանալ։

Յօդ. 14. Թաղ. Ժողովն՝ դաղանի քուէից բացարձակ առաւելութեամբ՝ մի պաշտօնեայ կընտրէ Թաղ. Խորհրդոյ համար, և մնացեալ անդամոց ընտրութիւնն ու Թաղ. Խորհրդոյ կազմութիւնն անոր կը յանձնէ։

Ընտրեալ պաշտօնեային՝ իւր ձեռնհաս ճիւղն ստանձնելով՝ միւս ճիւղերուն ձեռնհաս և յանձնառու անձինք կընտրէ, և Թաղ. Խորհրդոյ անդամոց անուններն՝ իրաքանչիւրոյն պաշտօնեութեան երկուքը մէկ անձի կրնան յանձնուիլ, որով Թաղ. Խորհուրդն երեք անդամէ կը կազմուի։ Բայց Ատենապետութիւնն՝ ուրիշ պաշտօնի, և Եկեղեցպանութիւն ու Գանձապետութիւնն իրարու հետ չեն կրնար միանալ։



Յօդ. 14. Թաղ. Ժողովն՝ դաղանի քուէից բացարձակ առաւելութեամբ՝ մի պաշտօնեայ կընտրէ Թաղ. Խորհրդոյ համար, և մնացեալ անդամոց ընտրութիւնն ու Թաղ. Խորհրդոյ կազմութիւնն անոր կը յանձնէ։

Ընտրեալ պաշտօնեային՝ իւր ձեռնհաս ճիւղն ստանձնելով՝ միւս ճիւղերուն ձեռնհաս և յանձնառու անձինք կընտրէ, և Թաղ. Խորհրդոյ անդամոց անուններն՝ իրաքանչիւրոյն պաշտօնեութեան հանդերձ՝ կը ծանուցանէ Թաղ. Ժողովին։

Յօդ. 15. Թաղ. Ժողովոյ դիւանն՝ ընտրեալ Թաղ. Խորհրդոյ անդամոց անուններն՝ իրենց պաշտօններով՝ կը ծանուցանէ առ Վարչութիւնն։

Յօդ. 16. Թաղ. Խորհրդէն որ և է պատճառաւ պակսող պաշտօնէին տեղ՝ մնացեալ անդամք ընտրութիւն կը կատարեն, և կը ծանուցանեն Թաղ. Ժողովին։

Յօդ. 17. Թաղ. Խորհրդոյ պաշտօնն երկու տարի կը տևէ, և իւր անդամները վերընտրելի են։

Յօդ. 18. Թաղ. Ժողովը կարող է՝ անվստահութեան քուէով՝ պաշտօնանկ ընել զԹաղ. Խորհուրդն ամբողջ, կամ անոր որ և է անդամը։

Յօդ. 19. Իւրաքանչիւր պաշտօնեայ՝ դէթ երկու օրը միանգամ՝ իւր պաշտօնին գլուխը կը գտնուի, և իւր ճիւղին վերաբերեալ խնդիրները կը տնօրինէ։

Իսկ իւր ձեռնհասութենէն վեր դատած խնդրոց տնօրէնութիւնն ու պատասխանատուութիւնը՝ Թաղ. Խորհրդոյ կը թողու։

Թաղ. Խորհուրդն ալ՝ իւր ձեռնհասութենէն վեր դատած խնդրոց համար՝ կը դիմէ առ Թաղ. Ժողովն։

Յօդ. 20. Այն խնդիրներն, որք մէկէն աւելի ճիւղերու միանգամայն կը վերաբերին, ձեռնհաս պաշտօնէից միաբան գործակցութեամբ կը տնօրինուին։

Յօդ. 21. Թաղ. Խորհուրդը դէթ՝ շաբաթը միանգամ՝ նիստ կընէ և կը տնօրինէ օրակարգին խնդիրները. միանգամայն և կը տեղեկանայ իւրաքանչիւր պաշտօնէի առանձինն կատարած տնօրէնութեանց։

Յօդ. 22. Թաղական Խորհրդոյ անդամք պատասխանատու են առ Թաղ. Ժողովը, մէն մի պաշտօնեայ՝ իւրեան յատուկ ճիւղին համար անհատաբար, իսկ հանրական խնդրոց համար՝ ամենքն հաւասարաբար։

Յօդ. 23. Թաղ. Խորհուրդն՝ ըստ կտակաց կանոնագրի՝ կտակարար թաղեցւոյն կամքը կիմանայ, ի ներկայութեան նորա խոստովանահօր և Թաղին Քարոզչին կամ գլխաւոր Եկեղեցականին. և ըստ այնմ դէթ երեք օրինակ կտակագիր պատրաստել տալով, ստորագրել կուտայ զանոնք կտակարարին, նորա խոստովանահօր և ներկայ կղերականին, և ինքն հաստատելով՝ կը յղէ Վարչութեան, ի վաւերացումն։

Յօդ. 24. Թաղ. Խորհուրդն՝ որբոց կանոնագրին համաձայն՝ պարտի իւր Թաղին անչափահաս որբոց ստացուածքն ապահովել, մինչև նոցա յարբունս հասնիլը։

Յօդ. 25. Թաղ. Խորհուրդը կը կատարէ իւր Թաղին Եկեղեցւոյն և վարժարանին և այլ ազգային հաստատութեան վերաբերեալ էջերու առուտուրներն. և ըստ օրինի Խոյրին առնելով՝ կալուածագիրը կը պատրաստէ և զայն ինքելով կը մատուցանէ Վարչութեան, ի վաւերացումն։

Յօդ. 26. Թաղ. Խորհրդոյ անդամք



կընան Թաղ. Ժողովոյ նիստերուն մասնակցիլ. յորում ձայն ունին, իսկ քուէ՝ ոչ։ Բայց եթէ Թաղ. Ժողովոյ ևս անդամ են, իրենց համարատուութեան վերաբերեալ խնդրոց մէջ միայն քուէ չունին։

Ատենապետ

Յօդ. 27. Ատենապետին պաշտօնն է՝ Թաղ. Խորհուրդն ի նիստ հրաւիրել և զայն վարել. իւրաքանչիւր պաշտօնէի և թաղային դատարանի վերաբերեալ խնդիրներն յղել. և Թաղին յարաբերութիւնները կատարել։

Իւր պարտաւորութիւնքն են՝

Ազգ. Վարչութեան, Թաղապետական Խորհրդին, Ոստիկանութեան և ուրիշ ազգաց հետ յարաբերութիւնները մշակելով, Թաղին ազգային իրաւունքներն անվթար պահել.

Ազգ. օրինաց ճշդիւ կիրառութեան, վարչական հրամանաց և հրահանգաց՝ ինչպէս նաև Թաղ. Ժողովոյն ու դատարանին որոշմանց գործադրութեան, և իւրաքանչիւր պաշտօնէի իւր ճիւղին վերաբերեալ տնօրէնութեանց հսկել.

Ժողովրդեան ստացուածքն՝ հրդեհի դէմ ապահովելու, աւազակաց դէմ պահպանելու, և անդաստաններն ու օրինաց անասատողներն յուղղութիւն բերելու միջոցներուն հոգ տանիլ.

Ընտանեաց խնամ չտանողներն, և 6—12 տարեկան զաւակաց նախնական պարտաւորիչ կրթութեանն՝ ինչպէս և դպրոցական թոշակի վճարման՝ անփոյթ ծնողքներն յորդորել և ի կարգ բերելու ջանալ.

Եւ յանձնարարեալ արքունի տուրքերն հաւաքել Թաղ. Խորհրդոյ համահաճութեամբ։

Յօդ. 28. Ատենապետը կընտրէ Թաղին դիւանը ու քէհեան, և Թաղ. Խորհրդոյ հաւանութիւնն առնէ յետոյ կանուանէ զանոնք։

Յօդ. 29. Թաղ. Խորհրդոյ ու դիւանի կնիքներն Ատենապետին քով՝ կամ անոր դիտութեամբը՝ կը պահուին ու կը գործածուին։

Ատենադպիր

Յօդ. 30 Ատենադպրին պաշտօնն է՝ արձանագրութեան, հաշուեկալութեան և աղդահամարի ու վիճակագրութեան տեսչութիւնն։

Իւր պարտաւորութիւնքն են՝

Թաղին շարժական և անշարժ գոյից և ստացուածոյ՝ ինչպէս նաև Թաղ. Խորհրդոյ տնօրէնութեանց և կարեւոր խնդրոյ՝ արձանագրութեան, եկեւմտից հաշուեկալութեան, և Թաղային աղդահամարին ու վիճակագրութեան հոդ տանիլ, քահանայական դասէն ստանալով ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց ցուցակներն.

Վախճանմանց վկայագրերն, ու ճանապարհորդաց և կալուածական առուծախի ծանուցագրերը տալ,

Եւ մկրտութեան վկայագրերն՝ ստորագրեալ ստանալով քահանայից դասէն՝ Թաղ. Խորհրդոյ վաւերել տալ։

Յօդ. 31. Ատենադպիրը կընտրէ Թաղին Դիւանադպիրն, եթէ անոր պէտք կայ, և Թաղ. Խորհրդոյ հաւանութիւնն ստանալէ յետոյ՝ կանուանէ զայն։

Եկեղեցպան

Յօդ. 32. Եկեղեցպանին պաշտօնն է՝ Եկեղեցւոյ հասութից հսկողութիւնը,



ներքին և արտաքին նիւթական պիտոյից մատակարարութիւնն, և աղքատաց խնամակալութիւնը։

Իւր պարտաւորութիւնքն են՝

Մոմադնի, իւղադնի, դանձանակի և պնակի՝ նմանապէս և ծննդոց կամ մկրտութեան, ամուսնութեանց և վախճանմանց հասոյթներն հաւաքել, տոմարադրել և յանձնել Գանձապետին.

Եկեղեցւոյ մոմի, իւղի, խնկի, ոգաստուց, ղգեստուց և այլ ամենայն ծախքերն հոդալ, ու թոշակաւոր պաշտօնէից թոշակները վճարել, դրամն ստանալով Գանձապետէն.

Աղքատաց դանձանակին և պնակին հասութից՝ և ողորմութեան դրամոց հաւաքման՝ հոդ տանիլ, և սոցա արդիւնքով թաղեցի աղքատ ազգայնոց պիտոյքն հոդալ, մասնաւորաբար խնամ ունելով կարօտ որբոց ապրուստին և կրթութեան՝ և աղքատ աղջկանց ամուսնութեան պիտոյից.

Կոտակաւ սահմանեալ պաշտօնի նուէրներն ստանալ Գանձապետէն և ըստ կտակին վճարել։

Յօդ. 33. Եկեղեցպանն՝ իւր գործողութեանց հաշիւները տոմարադրելու համար՝ մասնաւոր տումար մը կունենայ, և ըրած վճարմունքն անոր մէջ ստորագրել կուտայ։

Յօդ. 34. Եկեղեցպանը՝ բարեպաշտ և եկեղեցասէր թաղեցիներէն՝ իրեն օժանդակ ընկերներ կընտրէ, և Թաղ. Խորհրդոյ հաւանութիւնն ստանալէ յետոյ կանուանէ զանոնք։

Յօդ. 35. Եկեղեցպանը կընտրէ ժամակոչներն, և Թաղ. Խորհրդոյ հաւա-

նութիւնն ստանալէ յետոյ՝ կանուանէ զանոնք։

Հոգաբարձու

Յօդ. 36. Հոգաբարձուին պաշտօնն է՝ թաղին ազգ. վարժարանաց վերին տեսչութիւնն։

Իւր պարտաւորութիւնքն են՝

Կրթական օրինաց համաձայն՝ թաղային վարժարանաց բարեկարգութեանն ու յառաջադիմութեան հոգ տանիլ.

Դպրոցական պաշտօնէից և աշակերտաց պարտաւորութեանց ճշդիւ կատարմանն հսկել.

Յօգուտ չափահասից և երիտասարդաց՝ գիշերային և կիրակնօրեայ դասընթացքներ հաստատել. և ընթերցարան, լաբրան ու մատենադարան բանալու քայլերը լինել.

Դպրոցական թոշակաց և հասութից անթերի հաւաքման, և սահմանեալ ծախսուց կանոնաւորապէս վճարման փոյթ տանիլ։

Յօդ. 37. Հոգաբարձուն՝ իւր գործողութեանց հաշիւները տոմարագրելու համար՝ տումար մը կունենայ, և ըրած վճարմունքն անոր մէջ ստորագրել կուտայ։

Յօդ. 38. Հոգաբարձուն կընտրէ վարժարանաց դաստիարակ, ուսուցիչ և այլ պաշտօնեայներն, ըստ տրամադրութեան կրթական օրինաց։

Գանձապետ

Յօդ. 39. Գանձապետին պաշտօնն է՝ թաղային մնացուկին եկեւմտից մատակարարութիւնն։



Իւր պարտաւորութիւնքն են՝

Թաղային մնացուկին մուտքը դանձել և սահմանեալ ծախքերը վճարել, ըստ թաղային ելմտացոյցին, և առօրին տոմարագրել.

Կալուածները վարձու տալ խորհրդով Ատենապետին, մինչև մէկ տարւոյ միջոցի համար. իսկ աւելի երկար ժամանակի համար թաղ. ժողովոյ հաւանութեանը դիմել.

Ազգ. ուղղակի տրոց հաւաքմանն հսկել և կեդր. մնացուկի բաժինն ամեն ամսագլուխ իւր տեղն յանձնել։

Յօդ. 40. Գանձապետը կընտրէ հաւաքիչներ, Եկեղեցւոյ պաշտօնէից մէջէն կամ դրսէն, և թաղ. խորհրդոյ հաւանութիւնն ստանալէ յետոյ՝ կանուանէ զանոնք։

—

## ԳԼՈՒԽ Բ.

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԹԱՂԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆ

Յօդ. 41. Ընտրող է՝ իւր թաղին մէջ ամեն Հայ,
որ քսան և մէկ տարինրացուցած է,
որ կարդալ գրել գիտէ,
որ ազգ. ուղղակի տուրք կը վճարէ,
որ հոգևոր պատժոյ ներքև չէ,
Որ դատապարտեալ չէ յԱզգային իշխանութենէ՝ իրրև ընտանեայն անինամ, իրրև զաւակին նախնական պարտաւորիչ կրթութեանն անփոյթ, իրրև անհաւատարիմ յազգային պաշտաման, իրրև անսաստող ընդդէմ ազգ. իշխանութեան և իրրև անուանարկիչ ազգ. պաշտօնէից, որ զրկեալ չէ՝ կառավարական դա-

տավճռով՝ ընկերական իրաւանց վայելմանէ,
եւ անբաւական դատուած չէ, խելագարութեան պատճառաւ։

Յօդ. 42. Ընտրելի է ամէն Հայ, որ ընտրողութեան պայմաններն ունի, և երեսուն տարին լրացուցած է։

Յօդ. 43. Ընտրողական Ատեան կը կազմեն Թաղ. Խորհրդոյ անդամք և Թաղ. Ժողովէն ընտրեալ հինգ անձինք։

Յօդ. 44. Եթէ Թաղ. Ժողով չկայ, Թաղին առաւելագոյն տուրք վճարող և փորձառու ընտրողներէն հինգ անձինք կը հրաւիրուին Քարոզչէն՝ կամ ի բացակայութեանն Աւագերիցէն՝ Թաղ. Խորհրդոյ հետ Ընտրողական Ատեան կազմելու։

Յօդ. 45. Ընտր. Ատեանը կը պատրաստէ ընտրողաց և ընտրելեաց ցուցակները, քուէարկութեան սահմանեալ օրէն ութն օր յառաջ, և կը կախէ ի տես Ժողովրդեան. ընտրութեան հրաւէր կընէ. քուէարկութեան կը հսկէ. և քուէհամարը կը կատարէ։

Յօդ. 46. Ընտրելեաց ցուցակը որբագրելի է, և հաւասար թուով կը բաւէ։

Յօդ. 47. Քուէարկութիւնը կը կատարուի անձամբ կամ ստորագրեալ նամակաւ։

Անընդունելի է այն քուէնամակն, որոյ ստորագրութիւնն Ընտր. Ատենի անդամոց անծանօթ է։

Նմանապէս՝ քուէհամարի մէջ՝ անընդունելի է այն անունն, որ որոշեալ թուէն աւելի է, կամ անորոշ գրուած։



Յօդ. 48. Առաջին քուէարկութեամբ, եթէ ընտրողաց մեծամասնութիւնը՝ կէսէն դէթ մէկ աւելին՝ մասնակցած է անոր, ընտրեալ է այն՝ որ ստացած է բացարձակ առաւելութիւն, այսինքն քուէարկուաց թուոյն կէսէն աւելի քուէ։

Եթէ ընտրողաց մեծամասնութիւնն առաջին քուէարկութեան մասնակցած չըլլայ, կամ ընտրելոց թիւն առաջին քուէարկութեամբ չամբողջանայ, Ընտրողական Ատեանը՝ առաւելագոյն քուէ ստացողներէն երկպատիկ ցուցակ մը կը պատրաստէ, և կրկին անդամ կը հրաւիրէ զընտրողս զ'ողջել զայն կիսուակէս, երկրորդ քուէարկութեամբ։

Սոյն երկրորդ քուէարկութեան մէջ՝ ընտրողաց մեծամասնութիւն չփնտռուիր, և համեմատական առաւելութիւն ստացողք ընտրեալ են.

Հաւասար քուէ ստացողաց երիցագոյնն ընտրեալ է։

Յօդ. 49. Քարոզիչը կը հրաւիրէ զընտրեալս, որք կը կազմեն զԹաղային Ժողովն։

Յօդ. 50. Նորընտիր Թաղ. Ժողովն՝ առաջամեայ Դիւան մը կարգելով՝ կը դնէ ընտրութեան տեղեկագիրն, և անոր օրինաւորութիւնն ստուգելէ յետոյ՝ կը յանձնարարէ Քարոզչին մատուցանել զայն իւր կեդրոնին Վարչութեան, և ծանուցանել նմա Թաղ. Ժողովոյ կազմութիւնն։

Վարչութիւնը կը հաստատէ կոնդակաւ զնորընտիր Թաղ. Ժողովն, մինչև մէկ ամիս։ Սոյն պայմանաժամէն յետոյ՝ կեդրոնին լռութիւնը վաւերացում կը համարուի։

Յօդ. 51. Ա. Ընտր. Ատեան բողոք կամ խնդիր կընդունուի, ընտրողաց և ընտրելեաց յուցակներուն վրայ, քուէարկութեան որոշեալ ժամէն մինչև քսան և չորս ժամ յառաջ։

Ընտրութեան վրայ բողոք կընդունուի, հաստատութեան պայմանաժամէն մինչև ութն օր յառաջ։

Քուէարկութեան չմասնակցող ընտրողք բողոքելու իրաւունք չունին։

Քուէթուղթք կնքոյ ներքև կը պահուին, մինչև հաստատութեան պայմանաժամն։

Յօդ. 52. Երբ Թաղ. Ժողովոյ անդամոց քառորդը պակսի, պակսողներուն տեղ նոր ընտրութիւն կը կատարուի, ըստ առաջնոյն։

Յօդ. 53. Թաղ. Ժողովոյ պաշտօնը չորս տարի կը տևէ, և անդամք վերընտրելի են։

Չորս տարին միանդամ՝ սահմանադրական տարեգլխէն երեք ամիս յառաջ՝ նոր ընտրութիւնք կը կատարուին և կը հաստատուին. և ի լրանալ տարեգլխոյն՝ նախկին Թաղ. Ժողովը կը լուծուի, և նորընտիրն անմիջապէս անոր կը յաջորդէ։

Եթէ նորընտիր Ժողովոյ կազմութիւնն՝ որ և է պատճառաւ՝ յապաղի, նախկինն կը շարունակէ իւր պաշտօնն։

Յօդ. 54. Թաղ. Ժողովն լուծման վիճակի կենթարկէ ինքզինքն, երբ սահմանադրական տարեգլխին չմատուցանէ իւր հնմարատութիւնն, ըստ յօդուածոյ։

Յօդ. 55. Վարչութիւնն՝ յետ կը-



կուց ազգարարութեանց՝ կը լուծէ զԹաղ. Ժողովն,

Ա. Երբ սա Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան և աւանդութեան հակառակ վարմունք ունենայ.

Բ. Երբ ազգ. օրինաց և վարչական տնօրէնութեանց ու հրահանգաց անսաստէ.

Գ. Երբ վերոյիշեալ յանցանաց մէջ գտնուող Թաղ. Խորհուրդը չլուծէ.

Դ. Երբ Թաղ. Ժողովն ընտրողաց վստահութիւնը կորուսած լինելու ծանր կասկածանաց ենթարկի, և Վարչութիւնը՝ նոր ընտրութեամբ՝ զայն պարզելու փորձին պէտք տեսնէ։

Յօդ. 56. Վարչութիւնը՝ Թաղ. Ժողովոյ լուծման հրամանին հետ՝ նոր ընտրութեան հրահանգ կուտայ միանդամայն։

Յօդ. 57. Երբ անմիջապէս նոր ընտրութիւն կատարել անկարելի լինի. Վարչութիւնը տասներկու անդամէ Թաղ. Ժողով մը կը կարդէ, վեց ամսուան համար։

—

ՄԱՍՆԱՒՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ա. Ընտրողութեան պայմաններէն կարդալ դրելու պայմանը՝ դաւառացւոյ համար՝ պարտաւորիչ չէ առ այժմ, մինչև ցնոր տնօրէնութիւն։

Բ. Ինչպէս Կ. Պոլսոյ Թաղերը Կեդրոնական Վարչութեան, նոյնպէս դաւառաց Թաղերն կամ գիւղերն իրենց Դաւառական Վարչութեանց հետ յարաբերութիւն ունին, և անոնց կը մատու-

ցանեն իրենց համարատուութեան տեղեկագրերն. զորս Գաւառական Վարչութիւնք պարտին՝ նոյնութեամբ կամ ամփոփմամբ՝ ներկայել առ Իւրեանց Գաւառական Ժողովն և առ Կեդրոնական Վարչութիւն։

Գ. Առաջնորդանիստ քաղաքաց մէջ՝ Գաւառական Ժողովն Թաղ. Ժողովոյ պաշտօնն ալ կրնայ վարել, ինչպէս և Գաւառական Վարչութիւնն՝ Թաղ, Խորհրդոյ պաշտօնը։

22 Յունվար 1881

Ատենապետ Զեռնհասուքեան Դիւանի
ՅՈՎՀ. ԲԱՀԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ

Ատենապետ Կալուածոց Դիւանի
Բ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Ատենապետ Համարակալուքեան Դիւանի
Ս. Գ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ատենապետ Ցարաբերուքեան Դիւանի
Մ. ՁՕՊԱՆԵԱՆ

Ի դիմաց Իրաւասուքեան Դիւանի
Տ. Մ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

Ատենապետ Նախաձեռնուքեան Դիւանի
Յ. ՂԱԶԱՐ Ս. ՀՈՎՈՒԵԱՆ

Ատենապետ Խմբագրուքեան Դիւանի
Կ. Ս. ԻԹԻՒՃԵԱՆ

ՊԵՏ ԿՈՄ ՊՐ. Գ.
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясн
Ս. ՍՍԱՆԻԿՅԱՆ
28323-62

spec 54.

«Ազգային գրադարան»
NL0108438